

/Պատկերանիշ/

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

քաղաք Մինսկ

12 հոկտեմբերի 2022 թվականի

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան՝
հետևյալ կազմով՝

նախագահող դատավոր՝ Դատարանի Նախագահ Է.Վ. Հայրիյան,

գեկուցող դատավոր՝ Ա.Է. Թումանյան,

դատավորներ՝ Ա.Ս. Աժիբբայիմովա, Ժ.Ն. Բայիշև, Դ.Գ. Կոլոս, Տ.Ն.
Նեշատանա, Վ.Խ. Սեյտիմովա, Գ.Ա. Սկրիպկինա, Ա.Ա. Ֆեդորցով, Կ.Լ.
Չայկա,

դատական նիստի քարտուղար՝ Վ.Վ. Եղիազարյան,

ուսումնասիրելով գործի նյութերը՝ լսելով գեկուցող դատավորին,

դեկլարավելով Եվրասիական տնտեսական միության Դատարանի
կանոնադրության 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-75-րդ, 96-րդ, 98-
րդ կետերով,

խորհրդատվական եզրակացություն է տալիս Եվրասիական
տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի
72-րդ հոդվածի 6-րդ կետի պարզաբանման մասին Արդատանի
Հանրապետության Էկոնոմիկայի և առևտրի նախարարության դիմումի
վերաբերյալ:

I. Դիմողի հարցը

Արդատանի Հանրապետության Էկոնոմիկայի և առևտրի
նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն, Դիմող) դիմել է
Եվրասիական տնտեսական միության Դատարան (այսուհետ՝
Դատարան)՝ Եվրասիական տնտեսական միության մասին 2014
թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 72-րդ
հոդվածի 6-րդ կետի պարզաբանման մասին դիմումով:

Դիմումից հետևում է, որ Ղազախստանի Հանրապետությունում
գրանցված «Էպիրոկ Կենտրոնական Ասիա» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն)
2016 թվականին իրականացնում էր ապրանքների փոխանցում
Ղազախստանի Հանրապետությունում գրանցված պահեստից
Արդատանի Հանրապետությունում գրանցված մասնաճյուղի պահեստ:
Ապրանքների փոխանցումը ձևակերպվում էր տեղաշարժի ներքին

քեռնագրով, քանի որ մասնաճյուղը և ընկերությունը մեկ իրավաբանական անձ են, և ապրանքների տեղափոխման ժամանակ սեփականության իրավունքի փոխանցում չի կատարվում: Հետագայում ապրանքները իրացվում էին Ղրղզստանի Հանրապետության տարածքում, որի վերաբերյալ դուրս էին գրվում համապատասխան հաշիվ-ապրանքագրեր և վճարվում ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) Ղրղզստանի Հանրապետությունում ներքին մատակարարումների համար:

Ընկերության մասնաճյուղում արտագնա արտապլանային ստուգման արդյունքում Ղրղզստանի Հանրապետության Հարկային պետական ծառայությունը ներկայացրել է ԱԱՀ վճարման պահանջ՝ սկսած գործունեության մեկնարկի պահից, հաշվի առնելով տույժերն ու տուգանքները:

Միևնույն ժամանակ, ղեկավարվելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Ֆինանսական քաղաքականության վարչության 2020 թվականի հունիսի 25-ի № 09-45 գրությամբ, Դիմողը 2021 թվականի մայիսի 14-ին տեղեկացրել է Ընկերությանը, որ անուղղակի հարկերից ազատումը կիրառելի է միայն առանց իրացման նպատակի ապրանքանյութական արժեքները մասնաճյուղին փոխանցելու դեպքում:

Դրա հետ մեկտեղ, ինչպես նշում է Դիմողը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Ֆինանսական քաղաքականության վարչությունը 2021 թվականի մարտի 25-ի № 09-45 գրություն է ուղարկել Ընկերությանը, որում նշվել է, որ նրա կառուցվածքային ստորաբաժանմանը փոխանցված ապրանքների իրացման դեպքում պետք է կիրառվեն Ապրանքների արտահանման և ներմուծման, աշխատանք կատարելու և ծառայություն մատուցելու դեպքում անուղղակի հարկերի գանձման կարգի և դրանց վճարման վերահսկողության մեխանիզմի մասին արձանագրության 13.4-րդ և 25-րդ կետերի նորմերը, որը հանդիսանում է Պայմանագրի № 18 հավելվածը (այսուհետ՝ Արձանագրություն №18): ԱԱՀ-ն գանձվում է միայն ապրանքների հետագա իրացման դեպքում, իսկ ապրանքների ներհամակարգային փոխանցումը սեփական մասնաճյուղին անուղղակի հարկերով չի հարկվում:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը խնդրում է Դատարանին տրամադրել Պայմանագրի 72-րդ հոդվածի 6-րդ կետի նորմերի պարզաբանումը, մասնավորապես՝ արդյոք Միության որևէ անդամ պետության տարածք Միության մեկ այլ անդամ պետության տարածքից ապրանքների ներմուծումը հետագա իրացման նպատակով միևնույն իրավաբանական անձի սահմաններում դրանց փոխանցման կապակցությամբ հարկվում է անուղղակի հարկերով:

II. Ընթացակարգը դատարանում

Համաձայն Եվրասիական տնտեսական միության Դատարանի Կանոնադրության (Պայմանագրի № 2 հավելված) 68-րդ կետի (այսուհետ՝ Դատարանի Կանոնադրություն)՝ պարզաբանման մասին գործերի քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական միության Դատարանի Կանոնակարգով, որը հաստատվել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի № 101 որոշմամբ (այսուհետ՝ Դատարանի Կանոնակարգ):

Պարզաբանման մասին գործը քննությանը նախապատրաստելու շրջանակներում Դատարանի Կանոնակարգի 75-րդ հոդվածի կարգով հարցումներ են ուղարկվել և պատասխաններ ստացվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովից, Ռուսաստանի Դաշնության Գլխավոր դատախազությունից, Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեից, Բելառուսի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունից, Ռուսաստանի Դաշնության Դաշնային հարկային ծառայությունից, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանից, Բելառուսի պետական համալսարանից, Բելառուսի պետական տնտեսագիտական համալսարանից, Երևանի պետական համալսարանից, Ղազախստանի Հանրապետության օրենսդրության և իրավական տեղեկատվության ինստիտուտից, Ռուսաստանի Դաշնության կառավարությանն առընթեր օրենսդրության և համեմատական իրավագիտության ինստիտուտից, Ղազախստանի Ալ-Փարաբիի անվ. ազգային համալսարանից, Ռուսաստանի Գ.Վ. Պլեխանովի անվ. տնտեսագիտական համալսարանից:

Դատարանի Մեծ կոլեգիայի 2022 թվականի հունիսի 20-ի որոշմամբ Գրղաստանի Հանրապետության Էկոնոմիկայի և առևտրի նախարարության դիմումն ընդունվել է վարույթ:

III. Դատարանի եզրահանգումները

Ղեկավարվելով Դատարանի Կանոնադրության 50-րդ կետով Դատարանի Մեծ կոլեգիան իրականացնում է Պայմանագրի դրույթների պարզաբանում միմյանց միջև դրանց համակարգային փոխկապակցմամբ՝ հիմք ընդունելով միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը, հաշվի առնելով Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի դրույթները:

1. Հարկման ոլորտում անդամ պետությունների փոխգործակցության հարցերն ամրագրված են Պայմանագրի «Հարկեր և հարկում» 27-րդ բաժնում, ինչպես նաև թիվ 18 Արձանագրությամբ:

Համաձայն Պայմանագրի 71-րդ հոդվածի 1-ին կետի՝ որևէ անդամ

պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածք ներմուծվող ապրանքները հարկվում են անուղղակի հարկերով:

Թիվ 18 Արձանագրության 2-րդ կետին համապատասխան՝ անուղղակի հարկերն են ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) և ակցիզները (ակցիզային հարկը կամ ակցիզային վճարը):

Միևնույն ժամանակ, թիվ 18 Արձանագրության 2-րդ կետը սահմանում է, որ ապրանքներ են հանդիսանում իրացվող կամ իրացման համար նախատեսված ցանկացած շարժական և անշարժ գույք, տրանսպորտային միջոցները, էներգիայի բոլոր տեսակները:

Նշված իրավական նորմերի իմաստից հետևում է, որ անուղղակի հարկերով (ԱԱՀ և ակցիզներ) հարկման օբյեկտ է հանդիսանում որևէ անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածք ներմուծվող ապրանքը:

2. Համաձայն Պայմանագրի 71-րդ հոդվածի 2-րդ կետի, փոխադարձ առևտրում անդամ պետությունները գանձում են հարկեր, այլ տուրքեր և վճարներ այնպես, որ հարկումն այն անդամ պետությունում, որի տարածքում իրականացվում է այլ անդամ պետությունների ապրանքների իրացումը, լինի ոչ պակաս բարենպաստ, քան նույն հանգամանքներում իր տարածքից ծագող համանման ապրանքների նկատմամբ կիրառվող հարկումը:

Պայմանագրի 72-րդ հոդվածի 5-րդ կետն իր հերթին նախատեսում է, որ փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի դրույքաչափերը անդամ պետության տարածք ներմուծման դեպքում չպետք է գերազանցեն անուղղակի հարկերի այն դրույքաչափերը, որոնք կիրառվում են նմանատիպ ապրանքների նկատմամբ այդ անդամ պետության տարածքում դրանց իրացման ժամանակ:

Ինչպես հետևում է Պայմանագրի 71-րդ հոդվածի 3-րդ կետից, անդամ պետությունների կողմից սահմանվող ուղղությունները, ինչպես նաև փոխադարձ առևտրի վրա ազդեցություն գործող հարկերի հետ կապված օրենսդրության ներդաշնակեցման ձևերն ու կարգը չպետք է խախտեն մրցակցության պայմանները և խոչընդոտեն ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ազատ տեղաշարժը ազգային կամ Միության մակարդակով, ներառյալ՝

1) առավել զգայուն ենթաակցիզային ապրանքների նկատմամբ ակցիզային դրույքաչափերի ներդաշնակեցում (մերձեցում),

2) փոխադարձ առևտրում ավելացված արժեքի հարկի գանձման համակարգի հետագա կատարելագործում (այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ):

Այսպիսով, վերը նշված իրավական նորմերից բխում է, որ հարկման հարցերը մտնում են անդամ պետությունների իրավասության մեջ, սակայն նրանց լիազորություններն այս ոլորտում սահմանափակված են Միության իրավունքով և, մասնավորապես, խտրականության

բացառման սկզբունքով, որը բխում է ապրանքների և ծառայությունների ազատ մրցակցության համար հավասար պայմանների ստեղծման անհրաժեշտությունից՝ անկախ արտադրող երկրից, ամրապնդում է արդար առևտրի հիմքերը և փոխկապակցված է բարեխիղճ մրցակցության սկզբունքի հետ:

3. Պայմանագրի 72-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ ապրանքների փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գանձումն իրականացվում է նշանակության երկրի սկզբունքով, որը ապրանքների արտահանման դեպքում նախատեսում է ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի կիրառում և (կամ) ազատում ակցիզների վճարումից, ինչպես նաև ներմուծման դեպքում դրանց հարկում անուղղակի հարկերով:

Թիվ 18 Արձանագրության 2-րդ կետի նորմի համաձայն ապրանքների ներմուծումը հարկ վճարողների (վճարողների) կողմից որևէ անդամ պետության տարածք մեկ այլ անդամ պետության տարածքից ապրանքների ներկրումն է: Ապրանքների արտահանումն իր հերթին նույն նորմով սահմանված է որպես հարկ վճարողի կողմից վաճառվող ապրանքների արտահանում որևէ անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածք:

Համաձայն Պայմանագրի 72-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ապրանքները որևէ անդամ պետության տարածք մեկ այլ անդամ պետության տարածքից ներմուծելու դեպքում անուղղակի հարկերը գանձվում են այն անդամ պետության հարկային մարմինների կողմից, որի տարածք են ներմուծվում ապրանքները, եթե այլ բան նախատեսված չէ այդ անդամ պետության օրենսդրությամբ՝ ակցիզային դրոշմանիշերով (հաշվառման հսկիչ դրոշմապիտակներոց, նշաններ) մակնշման ենթակա ապրանքների մասով:

Հստակեցնելով Պայմանագրի 72-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթը, թիվ 18 Արձանագրության 13-րդ կետի առաջին պարբերությունը սահմանում է, որ որևէ անդամ պետության տարածք մեկ այլ անդամ պետության տարածքից ներմուծվող ապրանքների մասով անուղղակի հարկերի գանձումը (բացառությամբ սույն Արձանագրության 27-րդ կետով սահմանված դեպքի և (կամ) ներմուծվող ապրանքները ազատ մաքսային գոտու կամ ազատ պահեստի մաքսային ընթացակարգերով գրանցման) իրականացվում է այն անդամ պետության հարկային մարմնի կողմից, որի տարածքում են ներմուծվել ապրանքները, ապրանքների սեփականատեր հարկ վճարողների հաշվառման վայրում, այդ թվում այն հարկ վճարողների, որոնք կիրառում են հարկման հատուկ ռեժիմներ, ներառյալ՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 13.1-13.5-րդ կետերով նախատեսված առանձնահատկությունները:

Դատարանի Մեծ կոլեգիան գտնում է, որ նշանակման երկրի՝ նշված իրավական նորմերով նախատեսված սկզբունքի կիրառումը ենթադրում

Է անուղղակի հարկերի գանձման այն պետության իրավասություն, որտեղ տեղի է ունենում ապրանքների վերջնական սպառումը՝ անկախ նրանից արտահանման երկրից: Դրա հիման վրա բացառվում է այլ երկրներ ապրանքներ արտահանելիս անուղղակի հարկերի վճարումը, բայց միաժամանակ ենթադրվում է հարկի գանձումը դրանք ներմուծելիս:

Դատարանի Մեծ կոլեգիան ելնում է այն փաստից, որ արտահանողը չի հանդիսանում արտահանվող ապրանքի վերջնական սպառող, և համարում է, որ հարկային բեռը նրա կողմից արդեն վճարված անուղղակի հարկի տեսքով չպետք է դրվի այդպիսի հարկ վճարողի վրա: Այդ նպատակով հարկ վճարողը պահպանում է վճարված անուղղակի հարկի գումարների նվազեցման և արտահանող երկրի բյուջեից դրա փոխհատուցման իրավունքը:

Այս առումով, զարգացնելով նշանակման երկրի սկզբունքը, թիվ 18 հավելվածի 3-րդ կետի երկրորդ կետի նորմը նախատեսում է հարկ վճարողի՝ հարկային նվազեցումներ (հաշվանցումների) իրավունքը անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այն կարգին համանման կարգով, որը կիրառվում է այդ անդամ պետության տարածքից Միության սահմաններից դուրս արտահանված ապրանքների նկատմամբ:

Ապրանքի իրացման վայրը, համաձայն թիվ 18 Արձանագրության 3-րդ կետի երրորդ պարբերության, որոշվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ սույն կետով:

Ավելացված արժեքի հարկի գանձումը նշանակման երկրի սկզբունքով, ըստ Դատարանի Մեծ կոլեգիայի, պայմանավորված է ոչ միայն մրցակցության պահպանման և կրկնակի հարկումից խուսափելու նպատակով, այլ նաև կանխորոշվում է նշված հարկի՝ որպես սպառման հարկի իրավական բնույթով, քանի որ արտահանվող ապրանքների սպառումը տեղի է ունենում նշանակման երկրում:

Միևնույն ժամանակ, թիվ 18 Արձանագրության 25-րդ կետը նախատեսում է, որ այն ապրանքները, որոնց ներմուծումը անդամ պետության տարածք վերջինիս օրենսդրությանը համապատասխան իրականացվել է առանց անուղղակի հարկերի վճարման, այլ նպատակներով օգտագործելու դեպքում, քան այն նպատակները, որոնց կապակցությամբ տրամադրվել է ազատում կամ վճարման այլ կարգ, այդպիսի ապրանքների ներմուծումը ենթակա է հարկման անուղղակի հարկերով սույն բաժնով (բաժին «III. ապրանքների ներմուծման դեպքում անուղղակի հարկերի գանձման կարգը») սահմանված կարգով:

4. Պայմանագրի 71-րդ հոդվածի 2-րդ և 72-րդ հոդվածի 5-րդ կետերի նորմերի բառացի մեկնաբանությունից հետևում է, որ համապատասխան անդամ պետության հարկ վճարողի համար անուղղակի հարկերի վճարման պարտականությունը ծագում է

ապրանքների իրացման դեպքում:

Տվյալ եզրահանգումը հաստատվում է թիվ 18 Արձանագրության 13.1-րդ կետի նորմով, որից հետևում է, որ որևէ անդամ պետության հարկ վճարողի և մեկ այլ անդամ պետության հարկ վճարողի միջև պայմանագրի (կոնտրակտի) հիման վրա ապրանքներ ձեռք բերելու, այսինքն՝ ապրանքն իրացնելու դեպքում անուղղակի հարկերի վճարումն իրականացնում է այն անդամ պետության հարկ վճարողը, որի տարածք ներմուծվել են ապրանքները՝ ապրանքի սեփականատիրոջ կամ, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ, ապա կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի կողմից:

Ընդ որում, ապրանքների սեփականատեր, համաձայն թիվ 18 Արձանագրության 13-րդ կետի 2-րդ կետի, ճանաչվում է այն անձը, որն ունի ապրանքների նկատմամբ սեփականության իրավունք կամ որին ապրանքների սեփականության իրավունքի փոխանցումը նախատեսված է պայմանագրով (կոնտրակտով):

Թիվ 18 Արձանագրության 13.4-րդ կետը սահմանում է, որ եթե որևէ անդամ պետության հարկ վճարողը գնում է ապրանքներ, որոնք նախկինում ներմուծվել են այդ անդամ պետության տարածք մեկ այլ անդամ պետության հարկ վճարողի կողմից, և որոնց համար անուղղակի հարկեր չեն վճարվել, ապա անուղղակի հարկերի վճարումն իրականացվում է այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները՝ ապրանքների սեփականատիրոջ կամ, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ, կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի կողմից (եթե ապրանքներն իրացվելու են մեկ այլ անդամ պետության հարկ վճարողի կողմից կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի միջոցով):

Այսպիսով, անկախ այլ անդամ պետության տարածք ապրանքի ներմուծման ժամանակից, ըստ ընդհանուր կանոնի, անուղղակի հարկեր (ԱԱՀ) վճարելու պարտականությունը դրվում է այս անդամ պետության հարկ վճարողի վրա, որին անցնում է ապրանքի սեփականության իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանի Մեծ կոլեգիան արձանագրում է, որ իրավական փաստը, որն այն անդամ պետության հարկ վճարողի համար, որի տարածք են ներմուծվել ապրանքները, առաջացնում է անուղղակի հարկեր վճարելու պարտականություն, և, համապատասխանաբար, հարկային մարմինների համար՝ դրանց գանձման իրավունք, հանդիսանում է ներմուծվող ապրանքների սեփականության իրավունքի փոխանցումը:

5. Համաձայն Պայմանագրի 72-րդ հոդվածի 6-րդ կետի՝ անդամ պետության տարածք ներմուծման դեպքում անուղղակի հարկեր չեն գանձվում՝

1) այն ապրանքների համար, որոնք այդ անդամ պետության

օրենսդրությանը համապատասխան վերջինիս տարածք ներմուծվելիս ենթակա չեն հարկման (ազատված են հարկումից),

2) այն ապրանքների համար, որոնք ներմուծվում են անդամ պետության տարածք ֆիզիկական անձանց կողմից ոչ ձեռնարկատիրական գործունեության նպատակով,

3) այն ապրանքների համար, որոնց ներմուծումը որևէ անդամ պետության տարածք մեկ այլ անդամ պետության տարածքից իրականացվում է միևնույն իրավաբանական անձի սահմաններում դրանց փոխանցման կապակցությամբ (անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանվել հարկային մարմիններին այդպիսի ապրանքների ներմուծման (արտահանման) մասին ծանուցելու պարտավորություն):

Պայմանագրի 72-րդ հոդվածի 6-րդ կետի 3-րդ ենթակետի բառացի վերլուծությունը Դատարանի Մեծ կոլեգիային թույլ է տալիս պնդել, որ ապրանքները մեկ այլ անդամ պետության տարածք ներմուծելու դեպքում միևնույն իրավաբանական անձի շրջանակներում դրանց փոխանցման կապակցությամբ, բացակայում են հարկերի վճարման պարտականության ծագման ինչպես իրավական, այնպես էլ տնտեսական հիմքեր, քանի որ առկա չէ հենց ներմուծվող ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման փաստը:

Դատարանի Մեծ կոլեգիան նշում է, որ քննարկվող իրավական նորմը չի պարունակում որևէ լրացուցիչ պայման, որի առկայության դեպքում վճարման ենթակա են անուղղակի հարկերը, և այդ թվում՝ ԱԱՀ-ն, ինչը Դատարանի Մեծ կոլեգիային թույլ է տալիս եզրակացնել, որ միևնույն իրավաբանական անձի շրջանակներում ապրանքների փոխանցում կատարելու նպատակը չունի իրավական նշանակություն: Ապրանքի փոխանցումը որևէ իրավաբանական անձի սահմաններում իրավական տեսանկյունից ինքնին չի առաջացնում սեփականության իրավունքի փոխանցում:

6. Ելնելով վերոգրյալից՝ Դատարանի Մեծ կոլեգիան եզրակացնում է հետևյալը՝

Ապրանքների ներմուծումը Միության որևէ անդամ պետության տարածք Միության մեկ այլ անդամ պետության տարածքից՝ իրավաբանական անձի սահմաններում դրանց փոխանցման կապակցությամբ, անուղղակի հարկերով չի հարկվում՝ անկախ այդ ներմուծման նպատակներից:

IV. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենը ուղարկել դիմողին:

Խորհրդատվական կարծիքը տեղադրել Դատարանի պաշտոնական համացանցային կայքում:

Նախագահող՝
Դատավորներ՝

Է.Վ. Հայրիյան
Ա.Մ. Աժիբրայիմովա
Ժ.Ն. Բայիշև
Դ.Գ. Կոլոս
Տ.Ն. Նեշատանա
Վ.Խ. Սեյթիմովա
Գ.Ա. Սկրիպկինա
Ա.Է. Թումանյան
Ա.Ա. Ֆեդորցով
Կ.Լ. Չայկա